ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 16

«18» 02 2020թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանին Արարատի մարզի դատախազի պաշտոնից ազատելու և Արմեն Դմիտրիի Չիչոյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 17.02.2020թ. N 42-Ա և 38-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ս.Հովհաննիսյանի կողմից՝ Արարատի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ա.Չիչոյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մելքոնյան Դավիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Նիկողոսյան Հայկազ - Արարատի մարզի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Աբաջյան Արուսյակ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ

Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Հարությունյան Մերի -	Արարատի մարզի դատախազության տարածքային բաժնի պետի պաշտոնակատար:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի մարտի 9-ը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ